

ЭТНОГЕНЕЗ АРМЯНСКОГО НАРОДА И ЭТНОЭКОЛОГИЯ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

Р. Х. ГАГИНЯН

Связка "человек-природа" представляет важнейшее условие возникновения этноса и его функционирования. Влияние этноса на ландшафт менялся не только в пространстве, но и во времени. Согласно пассионарной теории этногенеза Л.Н.Гумилева, этносы проходят ряд стадий - от молодости до глубокого старения и смерти или существуют в состоянии равновесия с биоценозом своего ландшафта, в гомеостазе. На разных стадиях этнос по-разному влияет на вмещающий его ландшафт. Давление на природу осуществляется не эволюционно, а дискретно и переходит от равновесия к неравновесию и обратно. Возникающий ландшафт ведет себя иначе, чем прежний. За последние пять тысяч лет антропогенные изменения ландшафтов с разной интенсивностью и в пределах определенных территорий происходили многократно.

ETHNOGENESIS OF THE ARMENIAN PEOPLE AND ETHNOECOLOGY OF THE ARMENIAN HIGHLAND

R. KH. GAGINYAN

A relation of "man – nature" is the most important condition of origin of ethnos and its functioning. The influence of ethnos on the landscape has changed not only in space but also in time. According to the passionate theory of ethnogenesis by L.N.Gumilyev ethnic groups go through a number of stages – from youth to the deep aging and death, or they exist in a balance state with biocenosis of their landscape, in homeostasis. At different stages ethnos has different effects on the landscape enclosing it. The pressure on nature isn't evolutionary, but discrete and moves from balance to disbalance and back. The ensuing landscape is different from the old one. For the last five thousand years the anthropogenic landscape changes with different intensity and within designated areas have occurred repeatedly.

ԵԿՈՏՈՒՐԻԻՉՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

L. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գավառի պետական համալսարանի Աշխարհագրության ամբիոնի լաբորանտ

«Եկոտուրիզմ» տերմինը արևմուտքում պաշտոնապես օգտագործվել է մեքսիկացի էկոլոգ Ջեկտոր Սեբալոս-Լասկուրայնի (իսպ. Hector Ceballos-Lascurain) գիտաժողովներից մեկի ժամանակ՝ 20-րդ դարի 80-ականների կեսերին:

Գոյություն ունեն էկոտուրիզմի տարբեր սահմանումներ: Ահավասիկ.

«Եկոլոգիական տուրիզմ կամ էկոտուրիզմ» դա ճանապարհորդություն է բնական միջավայրի հանդեպ մեծ պատասխանատվությամբ՝ չխախտելով բնությունը և տեսարժան վայրերը՝ ուսումնասիրության կամ վայելելու նպատակով: Այն բնական միջավայրի վրա «փափուկ» ազդեցություն է ունենում, ապահովում է տեղաբնիկների սոցիալ-տնտեսական ակտիվ մասնակցություն և այդ գործունե-

նությունից եկամուտի ստացում» (Բնության պահպանության միջազգային կոր-
հուրդ):

«Էկոտուրիզմը պատասխանատու ճանապարհորդություն է բնական տա-
րածքներով, որոնք համագործակցում են բնության պահպանության հետ և բա-
րելավում են տեղաբնակների դրությունը»:

«Էկոտուրիզմը տուրիզմի տեսակ է, որը ներառում է ճանապարհորդություն
համեմատաբար անաղարտ բնությամբ վայրերով՝ բնական, մշակութա-ժողովր-
դագրական յուրահատկությունների մասին տեղեկություններ իմանալու նպա-
տակով»:

Էկոտուրիզմի առանձնահատկությունները կայանում են նրանում, որ այն կա-
րող է դադարեցնել բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունը և
խթանել տուրօպերատորների և տուրիստների համագործակցությունը բնու-
թյան պահպանության և սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Այդպես էլ մասնագետները չկարողացան միասնական կարծիքի գալ, թե ի՞նչ
է էկոտուրիզմը՝ անվանելով այն բնական, կանաչ, փափուկ և այլ անուններով:

Էկոտուրիզմը տուրիզմի ինդուստրիայում միակ ուղղությունն է, որը հե-
տաքրքրված է իր գլխավոր ռեսուրսի՝ ամբողջական բնական միջավայրի կամ
նրա առանձին բաղադրիչների պահպանությամբ: Երբ գործընթացին մասնակ-
ցում է նաև բնակչությունը, նա ևս հետաքրքրվում է այդ ռեսուրսների օգտա-
գործմամբ և իզուր չի վատնում:

Բնության մեջ ճամփորդությունը ծանոթություն է կենդանի բնության, տեղի
սովորույթների և մշակույթի հետ:

Ամեն դեպքում, էկոտուրիզմը ենթադրում է բնական միջավայրի հետ ներդաշ-
նակության ձեռքբերում: Այս տեսակի հիմքում ընկած է ճամփորդության այնպի-
սի տեսակ, որը ոչ մի վնաս չի հասցնում բնությանը:

Էկոտուրիզմի տեսակներն են.

Բիոտուրիզմ- սա այն տուրիզմն է, որի օբյեկտը հանդիսանում է կենդանի
բնության ցանկացած դրսևորում, լինի դա առանձին տեսակ, թե բիոցենոզ:

Բնության տուրիզմ- այն տուրիզմն է, որի օբյեկտ հանդիսանում է ցանկացած
բնություն, ինչպես կենդանի, այնպես էլ անկենդան (քարանձավներ, լեռներ, ճա-
հիճներ և այլն): Այն ներառում է նաև բիոտուրիզմը՝ որպես թեմատիկ ուղղու-
թյուն:

Էկոտուրիզմի օբյեկտներ կարող են լինել ինչպես բնական, այնպես էլ մշա-
կութային տեսարժան վայրերը, բնական և բնամաթրոպոզեն լանդշաֆտները,
որտեղ սովորույթային մշակույթը մի ամբողջություն է կազմում բնական միջա-
վայրի հետ:

Էկոտուրիզմը Հայաստանում համեմատաբար նոր հասկացություն է: Այն իր
հիմքում ունի բնության գրկում ճանապարհորդելու գաղափար: Այս գաղափարը,
սակայն, ավելի լայն է, քան պարզապես մի ճանապարհորդություն և ընդգրկում
է կյանքի բոլոր կողմերը՝ կենդանական և բուսական աշխարհը, բնության ամ-
բողջ բազմազանությունը, բնապահպանությունը, ավանդույթները և սովորույթ-
ները, մշակույթը, հասարակությունը և մարդուն: Էկոտուրիզմը ճանապարհոր-
դություն է այն վայրերը, ուր շատ թե քիչ պահպանված է անաղարտ բնությունը:
Այդպիսի ճանապարհորդությունները չեն խախտում էկոլոգիական համակարգե-

րի ամբողջականությունը: Դրանք հիմնականում տվյալ տարածքի բնական և մշակութային-ազգագրական առանձնահատկությունների մասին պատկերացում ստանալու նպատակ են հետապնդում: Միաժամանակ էկոտուրիզմը յուրահատուկ մի միջոց է տեղացիների համար բնության պահպանությունը շահավետ դարձնելու համար: Այսինքն՝ էկոտուրիզմը դեպի բնություն կողմնորոշված տուրիզմի ձև է և միաժամանակ բնության պաշտպանություն:

էկոտուրիզմի զարգացմանը նպաստեց տուրիստական գործակալությունների հաճախորդների ցանկությունը՝ ստանալ նոր և անկրկնելի տպավորություններ, նպաստել բնության պահպանմանը, զանգվածային տուրիզմի նկատմամբ հետաքրքրության նվազումը: Հայաստանը մեր տարածաշրջանում կարող է համարվել էկոտուրիզմի համար ամենաբարենպաստ գոտիներից մեկը:

Հայաստանը, գտնվելով ծովի մակարդակից 390- 4090մ բարձրության վրա, իր փոքր տարածքում ներառել է բնական անսահման բազմազանություն՝ քարե կիսանապատներից մինչև ճահճուտներ, սաղարթավոր անտառներ և ալպիական մարգագետիններ: Հայաստանում տարվա ընթացքում բույն են հյուսում 360-ից ավելի թռչնատեսակներ, մինչդեռ ամբողջ Եվրոպայում դրանց քանակը ընդամենը 400-500 է: Հատկանշական է, որ հենց Հայաստանում է աճում ցորենի վայրի նախնին: Հայաստանում հանդիպող մուֆլոնը իր ազգակիցների մեջ համարվում է միակը և անկրկնելին: Հյուսիս-արևելքում, Խոսրովի անտառում, Վայքում, Ջանգեղուրում կարելի է հանդիպել հովազի, կովկասյան գորշ արջերի, լուսանների, գայլերի և այլն: Հայաստանում մեկ քառակուսի կիլոմետր տարածության վրա կարելի է հանդիպել 100-ից ավելի բուսատեսակ, ինչը համաշխարհային չափանիշներով համարվում է ռեկորդային: Հայկական բուսատեսակներից 200-ը համարվում է ռելիկտային:

Հայաստանի կենդանական աշխարհի տեսակների մեկ քառորդը, ինչպես նաև բազմաթիվ ռելիկտային բուսատեսակներ միջազգային առումով գտնվում են անհետացման եզրին: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանի հողատարածքի մի զգալի մասը ինտենսիվ կերպով շահագործվում է: Բայց Հայաստանում, հատկապես բարձր լեռնային գոտում և կիսանապատային տարածքներում, դեռ կան կուսական տարածքներ:

Մարդկային գործնության համար անմատչելի, գյուղատնտեսական շահագործման համար անօգուտ այդ տարածքները դարձել են յուրատեսակ Նոյան տապան բազմաթիվ էնդեմիկ տեսակների համար: Միջնադարում այստեղ կարող էիր հանդիպել միայն ճգնավորների, որոնք այստեղ էին գալիս երկնքին և Աստծուն մոտիկ լինելու համար:

Հայաստանում վանքերը կառուցված են բնակության վայրերից հեռու, այնտեղ, ուր բնությունը հիասքանչ է և երկյուղածություն է ներշնչում Աստծո արարչագործության հանդեպ: Ամբողջական էկոլոգիան իր մեջ չի կարող չներառել պատմությունը: Պատմական և բնական հուշարձանները փոխկապակցված ու միասնական են: Հայաստանում կուսական տարածքներում բնության և պատմության ու մշակութային հուշարձանների բազմազանությունը լրացնում են իրար:

Սակայն վերջին տասնամյակում սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը հանգեցրել է բնական պաշարների անխնա, երբեմն անմիտ օգտագործմանը, քանզի այն հաճախ արվել է առանց համապատասխան սրտացավու-

թյան և առանց մասնագետների հսկողության, առանց անհրաժեշտ գիտելիքների: Դա հանգեցրել է բնական համակարգերի՝ անտառների, ճահճուտների, լեռնային մարգագետինների ընդհանուր վիճակի վատթարացմանը, որը կարող է անուղղելի հետևանքներ ունենալ: Այս ամենի հետևանքով կարող են անհետանալ բույսերի ու կենդանիների բազմաթիվ տեսակներ, այդ թվում՝ էնդեմիկ և արժեքավոր տեսակներ: Պետության գործադրած ջանքերը չեն լուծում Հայաստանի առջև ծառացած էկոլոգիական բոլոր խնդիրները: Որպես հեռանկարային ուղի՝ այս խնդիրները լուծելու համար էկոլոգիական տուրիզմը անփոխարինելի է:

Որպեսզի էկոլոգիական տուրիզմը կարողանա իրական դրական ազդեցություն ունենա երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ինչպես նաև դառնա տուրիզմի զարգացման իրական ուղղություններից մեկը, այն պետք է ներառի երեք հիմնական ասպեկտներ.

1. տուրիստների կողմնորոշում էկոլոգիական ռեսուրսների օգտագործման ուղղությամբ,

2. բնական միջավայրի անադարտության պահպանում,

3. տվյալ տարածաշրջանների բնակչության կյանքում ավանդույթների պահպանում:

Գեղարքունիքի մարզում կան բոլոր հնարավորությունները՝ էկոտուրիզմի զարգացման համար: Սարգն աչքի է ընկնում բնական և պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ կարելի է կազմակերպել և՛ բիոտուրիզմ, և՛ բնական տուրիզմ: Գեղամա լեռնաշղթան, իր նախալեռներով հանդերձ, հանդիսանում է էկոտուրիզմի համար իդեալական վայր: Լեռնաշղթայի գագաթային մասերում և մերձգագաթային սարավանդերում կան բազմաթիվ լճեր, որոնց շրջակայքում լանդշաֆտը պահպանվում է այնպես, ինչպես եղել է: Կարելի է հանդիպել քարացրոնների, խարամային կոների, հրաբխային ռուբերի, սարցադաշտային տրոգի, կրկեսի և այլ հրաբխային ու սոցադաշտային գոյացությունների:

Պարզապես անկրկնելի ու անմոռանալի է արշավը դեպի Ակնա լիճ: Ակնա լիճը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի մերձգագաթային սարավանդի վրա: Դեպի լիճ տանող ճանապարհը վտանգավոր է և մի քիչ դժվարանցանելի: Հարկավոր են լեռնագնաց մեքենաներ: Որոշ հատվածում ընդհանրապես ճանապարհ չի երևում, միայն փորձառու ուղեկցորդների ուղեկցությամբ կարելի է կատարել այդպիսի ճանապարհորդություն: Ճանապարհին կարելի է հանդիպել հեղեղատների, քարացրոնների, լավային դաշտերի: Սակայն հետաքրքիր է նաև սարվորների կենսակերպը: Նախալեռներում ապրում են քոչվոր անասնապահներ, որոնք մինչև ձյան գալը մնում են լեռներում: Սակայն այդ ընտանիքների որոշ մասը նույնիսկ ձմեռում է այդ կացարաններում: Այդ մարդկանց կենսակերպը և վարքագիծը շատ է տարբերվում քաղաքակիրթ մարդկանց կենսակերպից և վարքագծից: Մի քանի ժամ անցկացնելով այդ մարդկանց շրջապատում, ասես վերանում ես քաղաքակրթությունից՝ ականա հայտնվելով հին՝ գրքային ժամանակներում: Այս մարդիկ շատ հյուրասեր են, պարզամիտ, կոփված ու արևահարված:

Այս բոլոր հետաքրքրություններից հետո համկարծ երևում է Ակնա լիճը, որը կարծես փոքրիկ Սևան լիճի լեռների գրկում: Շրջապատված բարձր լեռներով՝ լիճը դառնում է ավելի առեղծվածային ու գեղեցիկ: Նրա ափերին տաք եղանա-

կին միշտ փրփուր է լինում: Իսկ ցուրտ եղանակին լիճը սառչում է: Սակայն, ինչպես ասում են, լիճը տարվա մեծ մասը ծածկված է լինում ամպե մշուշով:

Սևանի ավազանում հայտնաբերվել է 1600 բարձրակարգ բուսատեսակ, որից 1000-ը աճում է Արդանիշի թերակղզու տարածքում: Արգիճիի տարածքում կան շուրջ 300 տեսակի դեղաբույսեր:

Մարտունի քաղաքից դեպի հարավ-արևելք տարածվում է Մթնածորը: Չորի միջով հոսում են հարյուրավոր սառնորակ աղբյուրներ, որոնցից էլ գոյանում է Մարտունի գետը: Այստեղ աճում ու բազմանում են 300-ից ավելի բացառիկ նշանակության դեղաբույսեր, քարաքոսների մի քանի տեսակներ, բնադրում են վայրի թռչուններ, կաթնասուններ և սողուններ: Սակայն այստեղ ամենազլխավորը Մթնածորի ջրանցքն է, որը կառուցվել է ուրարտական թագավորության ժամանակ:

Մարզի տարածքում կան նաև անտառներ, որոնք զբաղեցնում են մոտ 24 հազար հեկտար: Բնական անտառները տարածվում են Գետիկի ձորում, որտեղ էլ կազմավորվել է Գետիկի արգելավայրը:

Սևանի ավազանը աչքի է ընկնում նաև բացառիկ թռչնաշխարհով, որոնց մեջ առանձնանում են սպիտակ տառեղը, հայկական որորը, ոտացուպիկը, քաջահավը և այլն: Այս ամենը մեծ հնարավորություն է տալիս մարզում էկոտուրիզմի զարգացմանը:

Սա միայն մի չնչին մասն է Գեղարքունիքի մարզի հրաշագեղ վայրերից, որոնց շնորհիվ մարզում կարող է զարգանալ էկոտուրիզմը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **А. В. Бавкин**, Специальные виды туризма учебное пособие, Ростов на-Дону, 2008
2. **М. А. Рывдач**, "Основы туризма", учебное пособие, Москва, 2012

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭКОТУРИЗМА В ГЕГАРКУНИКСКОМ МАРЗЕ

Л. А. МКРТЧЯН

Экотуризм - это ответственное путешествие в природные территории, которое содействует охране природы и улучшает благосостояние местного населения. Экотуризм - это единственное направление в индустрии туризма, кровно заинтересованное в сохранении своего главного ресурса - естественной природной среды или ее отдельных компонентов.

THE DEVELOPMENT TENDENCIES OF THE ECOTOURISM IN THE MARZ OF GEGHARKUNIK

L. A. MKRTCHYAN

Ecotourism – is a responsible travelling througho nature that interacts the preservation of nature and improves welfare of inhabitants. Ecotourism is the only branch in the tourism industry that aims at the preservation of its main resource- the natural environment or its seperate components.